

ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հարգելի հարկ վճարող

ՀՀ ֆինանսների նախարարության գործառույթներից է հարկ վճարողների և արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող անձանց սպասարկումը, մասնավորապես, հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով օրենսդրական փոփոխությունների իրազեկման աշխատանքների կազմակերպումը:

Վերոնշյալով պայմանավորված Ձեզ է ներկայացվում ՓՄՁ բարենպաստ հարկային միջավայրի ապահովման և գործարքների փաստաթղթավորման հարցերի կանոնակարգման նպատակով 21.06.2014թ. ՀՀ ԱԺ կողմից ընդունված հարկային օրենսդրության փոփոխությունների փաթեթի հիմնական դրույթները: Փաթեթը ներառում է «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-128-Ն, «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-129-Ն, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-130-Ն, «Հսկիչ-դրամարկային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-131-Ն, «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-132-Ն, «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-133-Ն օրենք և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-134-Ն օրենքները:

Օրենքները հրապարակվել են ՀՀՊՏ 2014.07.30/41(1054) տեղեկագրում:

Նշված իրավական ակտերով կատարվել են հետևյալ հիմնական փոփոխությունները.

2014 թվականի հոկտեմբերի 1-ից ներդրվելու է ընտանեկան ձեռնարկատիրության հարկման արդյունյալ համակարգը, «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանվել են ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու և դադարելու կարգերը, կարգավորվել են հարկման և հարկային հաշվառման հարցերը.

1. Հարկային օրենսդրության կիրառության իմաստով ընտանեկան ձեռնարկատիրություն է համարվում շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով ընտանեկան մեկից ավելի անդամների (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) կողմից համատեղ իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը: Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտներ կարող են համարվել նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասույթ՝ առանց ԱԱՀ-ի 18.0 մլն դրամը չգերազանցած ՀՀ ռեզիդենտ համարվող առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, այդ թվում՝ նոր ստեղծվածները:

2. Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու պայմանը բավարարող անձն ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ է համարվում՝

- յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից մինչև այդ տարվա ավարտը, եթե մինչև այդ տարվա փետրվարի 20-ը իր հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացրել ընտանեկան

ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն և ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր:

- պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման օրվանից մինչև տվյալ տարվա ավարտը, եթե անձը մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրն իր հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացրել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն և ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր:

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-134-Ն օրենքի անցումային դրույթներին համապատասխան՝ 2014 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացվում է մինչև 2014 թվականի հոկտեմբերի 20-ը:

3. Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտները.

- ազատվում են ընտանեկան ձեռնարկատիրության մասով առաջացող բոլոր պետական հարկերից (այդ թվում՝ որպես հարկային գործակալ հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից), բացառությամբ ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված ընտանիքի անդամներին (այդ թվում՝ վարձու աշխատող համարվող) ընտանեկան ձեռնարկատիրության մասով հարկային գործակալի կողմից վճարվող հարկվող եկամուտներից եկամտային հարկը հաշվարկվելու ու վճարելու պարտավորությունից, որը վճարվում է յուրաքանչյուր անձի համար ամսական 5 հազար դրամի չափով մինչև եկամուտների հաշվարկման ամսվան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ), որը նրանց համար համարվում է եկամտային հարկի գծով վերջնական հարկային պարտավորություն,

- յուրաքանչյուր հաշվետու տարվա համար մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 1-ը հարկային մարմին են ներկայացնում հաշվետվություն՝ գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացման շրջանառության վերաբերյալ, ինչպես նաև ընտանիքի անդամներին (այդ թվում՝ վարձու աշխատող համարվող) ընտանեկան ձեռնարկատիրության մասով հարկային գործակալի կողմից վճարվող հարկվող եկամուտների և դրանց մասով վճարված եկամտային հարկի վերաբերյալ անձնավորված հաշվետվություն,

- նրանց վրա չի տարածվում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված առանձին ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների, իրացման փաստացի գների (այդ թվում՝ միջին), ինչպես նաև մատուցված ծառայությունների ծավալների և դրանց փաստացի սակագների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու պահանջը,

- իրենց կողմից առաքվող, տրամադրվող, վաճառվող ապրանքների և մատուցվող ծառայությունների գծով գնորդներին (ծառայություններից օգտվողներին) դուրս են գրում հաշվարկային փաստաթղթեր՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,

- իրենց կողմից դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերում ԱԱՀ-ի դրույքաչափի և գումարի վերաբերյալ նշում չեն կատարում (հարկային հաշիվ դուրս չեն գրում),

- «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հավելվածով նախատեսված՝ առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) գրքեր չեն վարում,

- «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի պահանջները խախտելու համար նրանց նկատմամբ կիրառվում են նույն օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները.

- անփաստաթուղթ արտադրանքի և (կամ) ապրանքի տեղափոխման կամ առաքման առաջին դեպքում կիրառվում է նախազգուշացում, իսկ նախազգուշացումը կիրառելուց հետո՝ մեկ փարվա ընթացքում, խախտումը երկրորդ անգամ կատարելու դեպքում սուբյեկտը դադարում է օգտվել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտների հարկման արտոնյալ համակարգից:

4. Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարած անձը ԱԱՀ վճարող կհամարվի ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվանից մինչև փվյալ օրացուցային փարվա ավարտը, եթե ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվա դրությամբ, օրենքի համաձայն, չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող կամ օրենքով սահմանված ժամկետներում իր հաշվառման վայրի հարկային մարմին չի ներկայացրել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն: Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտը կարող է համարվել շրջանառության հարկ վճարող ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվանից մինչև փվյալ փարվա ավարտը (բացառությամբ օրենքով նախատեսված՝ տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե մինչև այդ օրվա հաջորդող 20-րդ օրն իր հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացրել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

«Ավելացված արժեքի հարկի մասին» և «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքներով 2015թ. հունվարի 1-ից սահմանվել են ԱԱՀ վճարող և շրջանառության հարկ վճարող համարվելու նոր կարգեր և պարզեցվել են գործող ընթացակարգերը.

1. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող գրանցված կամ ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող իրավաբանական անձը, օտարերկրյա կազմակերպության ՀՀ հաշվառված մասնաճյուղը (անկախ ոչ առևտրային կազմակերպություն հանդիսանալու հանգամանքից), նոտարը կամ անհատ ձեռնարկատերը ԱԱՀ վճարող կհամարվի օրացուցային փարվա հունվարի 1-ից մինչև փարվա ավարտը, եթե հունվարի 1-ի դրությամբ օրենքի համաձայն, չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող կամ օրենքով սահմանված ժամկետներում հարկային մարմին չի ներկայացրել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն,

Ընդ որում, օրացուցային տարվա ընթացքում նոր ստեղծված անձինք ԱԱՀ վճարող կհամարվեն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև փվյալ օրացուցային փարվա ավարտը, եթե այդ օրվա դրությամբ, օրենքի համաձայն, չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարող կամ օրենքով սահմանված ժամկետներում հարկային մարմին չեն ներկայացրել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

2. Օրենքով նախատեսվել է ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարության միասնական ձև (միասնական հայտարարություն), որը պետք է հաստատվի ՀՀ կառավարության կողմից:

3. «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանները բավարարող ՀՀ ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները շրջանառության հարկ վճարող կարող են համարվել (բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի) յուրաքանչյուր փարվա հունվարի 1-ից մինչև այդ փարվա ավարտը, եթե մինչև այդ փարվա փետրվարի 20-ը հարկային մարմին են ներկայացրել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Ընդ որում, եթե նոր ստեղծված անձինք պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև այդ օրվա հաջորդող 20-րդ օրն հարկային մարմին են ներկայացրել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, ապա շրջանառության հարկ վճարող կարող են համարվել պետական

գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև տվյալ տարվա ավարտը:

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-128-Ն օրենքի անցումային դրույթներին համապատասխան՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու վերջնաժամկետը կիրառվում է միայն այն դեպքում, եթե հարկային մարմինը հարկ վճարողին ծանուցել է օրենքով նման վերջնաժամկետ սահմանված լինելու մասին: Եթե հարկային մարմինը ծանուցումը հարկ վճարողին ուղարկում է շրջանառության հարկ վճարող համարվելու համար օրենքով սահմանված ժամկետներից հետո, ապա որպես շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ներկայացման վերջնաժամկետ սահմանվում է հարկ վճարողին ծանուցումը տրամադրելու օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրը:

4. Գյուղատնտեսական արտադրանք արտադրողները ԱԱՀ վճարող են համարվում օրացուցային տարվան նախորդող տարվա ընթացքում ԱԱՀ-ի շեմը գերազանցելու դեպքում՝ տվյալ օրացուցային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ օրացուցային տարվա ավարտը կամ օրացուցային տարվա ընթացքում ԱԱՀ-ի շեմը գերազանցելու պահից մինչև օրացուցային տարվա ավարտը կամ միասնական հայտարարությունում նշված օրվանից (բայց միասնական հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 30-րդ օրվանից ոչ շուրջ) մինչև միասնական հայտարարությունում նշված տարվա ավարտը:

Միաժամանակ, «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասից հանվել է գյուղատնտեսական արտադրանք արտադրողների համար շրջանառության հարկ վճարող համարվելու սահմանափակումը և գյուղատնտեսական արտադրանք արտադրողները ևս կարող են համարվել շրջանառության հարկ վճարող:

5. Շրջանառության հարկ վճարողը դադարում է այդպիսին համարվելուց, եթե մասնավորապես՝ միասնական հայտարարություն է ներկայացրել հարկային մարմին (նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին)՝ միասնական հայտարարությունում նշված օրվանից (բայց միասնական հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 30-րդ օրվանից ոչ շուրջ) մինչև միասնական հայտարարությունում նշված տարվա ավարտը:

6. «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի առաջին պարբերության 2-4-րդ կետերով սահմանված փաստերից որևէ մեկը տեղի ունենալու պահից (օրվանից) մինչև այդ օրվան հաջորդող 30-րդ օրը հարկ վճարողը իր հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացնում միասնական հայտարարություն՝ նշելով շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու համապատասխան հիմքը և պահը (օրը):

7. «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվել է, որ առևտրային կազմակերպությունները չեն կարող հանդիսանալ շրջանառության հարկ վճարող, եթե առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է ՀՀ այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը):

Առևտրական (առք ու վաճառքի) գործունեության մասով փոփոխվել են շրջանառության հարկի դրույքաչափերը, ներդրվել է ապրանքների ձեռքբերման գործարքների փաստաթղթավորման պահանջը և սահմանվել են պարասխանավորության միջոցներ.

1. 2014թ. հոկտեմբերի 1-ից առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից եկամուտների մասով շրջանառության հարկը հաշվարկվում է հարկվող օբյեկտի նկատմամբ 1% դրույքաչափով (ներկայիս 3.5%-ի փոխարեն):

2. Առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողները պարտավոր են, օրենքով սահմանված պահանջներին համապատասխան, փաստաթղթավորել բոլոր ապրանքներ ձեռք բերելու գործարքները: «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հավելվածով սահմանվել է առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների կողմից ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման ստուգումների կարգը:

Հարկային մարմնի կողմի իրականացրած ստուգման արդյունքում ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում արձանագրվելու դեպքում սահմանվել են պատասխանատվության հետևյալ միջոցները և շրջանառության հարկի հաշվարկման հետևյալ առանձնահատկությունները.

2014 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում՝

- առաջին անգամ խախտում արձանագրվելու դեպքում կիրառվում է նախազգուշացում,
- երկրորդ անգամ խախտում արձանագրվելու դեպքում կիրառվում է տուգանք՝ 20 հազար դրամի չափով,

- երրորդ անգամ խախտում արձանագրվելու դեպքում 01.10.2014թ.-ից մինչև խախտման օրն ընկած ժամանակահատվածի համար գործունեության այդ մասով իրացման շրջանառության (իրացումից հասույթի) նկատմամբ հաշվարկվում և գանձման է առաջադրվում շրջանառության հարկի գումարը՝ 5 տոկոս դրույքաչափով: Այս դեպքում խախտման օրվան հաջորդող օրվանից մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրն ընկած ժամանակահատվածի համար առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից եկամուտների համար շրջանառության հարկը հարկ վճարողը պարտավոր է հաշվարկել հարկվող օբյեկտի նկատմամբ 5 տոկոս դրույքաչափով (շրջանառության հարկի հաշվարկը ներկայացնելով այդ ժամանակահատվածի համար),

- չորրորդ անգամ խախտում արձանագրվելու դեպքում ստուգման ակտը կազմելու օրվան հաջորդող օրվանից հարկ վճարողը դադարում է հանդիսանալ շրջանառության հարկ վճարող և համարվում է ԱԱՀ վճարող (անկախ ԱԱՀ-ի շեմը չգերազանցելու հանգամանքից) տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում և դրան հաջորդող մեկ տարում: Այս դեպքում շրջանառության հարկ վճարողի՝ 01.10.2014թ.-ից մինչև ԱԱՀ վճարող համարվելու օրն ընկած ժամանակահատվածի համար գործունեության այդ մասով իրացման շրջանառության (իրացումից հասույթի) նկատմամբ հաշվարկվում և գանձման է առաջադրվում շրջանառության հարկի գումարը՝ 5 տոկոս դրույքաչափով:

2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում՝

- առաջին անգամ խախտում արձանագրվելու դեպքում կիրառվում է տուգանք՝ 20 հազար դրամի չափով.

- երկրորդ անգամ խախտում արձանագրվելու դեպքում մինչև խախտման օրն ընկած՝ ավարտված հաշվետու ժամանակահատվածների համար գործունեության այդ մասով իրացման շրջանառության (իրացումից հասույթի) նկատմամբ հաշվարկվում և գանձման է առաջադրվում շրջանառության հարկի գումարը՝ 5 տոկոս դրույքաչափով (նվազեցնելով այդ ժամանակահատվածների համար գործունեության այդ մասով իրացման շրջանառության (իրացումից հասույթի) նկատմամբ շրջանառության հարկ վճարողի կողմից հաշվարկված շրջանառության հարկի գումարները), ինչպես նաև հարկի գումարները սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված տույժերի գումարը: Այս դեպքում խախտման օրը ներառող և մինչև տվյալ տարվա ավարտն ընկած հաշվետու ժամանակահատվածների համար առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից եկամուտների համար շրջանառության հարկը հարկ վճարողը պարտավոր է հաշվարկել հարկվող օբյեկտի նկատմամբ 5 տոկոս դրույքաչափով,

- երրորդ անգամ խախտում արձանագրվելու դեպքում ստուգման ակտը կազմելու օրվան հաջորդող օրվանից հարկ վճարողը դադարում է հանդիսանալ շրջանառության հարկ վճարող և համարվում է ԱԱՀ վճարող (անկախ ԱԱՀ-ի շեմը չգերազանցելու հանգամանքից) տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում և դրան հաջորդող մեկ տարում: Այս դեպքում շրջանառության հարկ վճարողի՝ ընթացիկ տարում շրջանառության հարկ վճարող համարվելու օրվանից մինչև ԱԱՀ վճարող համարվելու օրն ընկած ժամանակահատվածի համար գործունեության այդ մասով իրացման շրջանառության (իրացումից հասույթի) նկատմամբ հաշվարկվում և գանձման է առաջադրվում շրջանառության հարկի գումարը՝ 5 տոկոս դրույքաչափով (նվազեցնելով այդ ժամանակահատվածի համար գործունեության այդ մասով իրացման շրջանառության (իրացումից հասույթի) նկատմամբ շրջանառության հարկ վճարողի կողմից հաշվարկված շրջանառության հարկի գումարները), ինչպես նաև հարկի գումարները սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված տույժերի գումարը:

2016 թվականի հունվարի 1-ից հետո՝

- առաջին անգամ խախտում արձանագրվելու դեպքում մինչև խախտման օրն ընկած՝ ավարտված հաշվետու ժամանակահատվածների համար գործունեության այդ մասով իրացման շրջանառության (իրացումից հասույթի) նկատմամբ հաշվարկվում և գանձման է առաջադրվում շրջանառության հարկի գումարը՝ 5 տոկոս դրույքաչափով (նվազեցնելով այդ ժամանակահատվածների համար գործունեության այդ մասով իրացման շրջանառության (իրացումից հասույթի) նկատմամբ շրջանառության հարկ վճարողի կողմից հաշվարկված շրջանառության հարկի գումարները), ինչպես նաև հարկի գումարները սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված տույժերի գումարը,

- կրկնակի խախտում արձանագրվելու դեպքում ստուգման ակտը կազմելու օրվան հաջորդող օրվանից հարկ վճարողը դադարում է հանդիսանալ շրջանառության հարկ վճարող և համարվում է ԱԱՀ վճարող՝ անկախ ԱԱՀ-ի շեմը չգերազանցելու հանգամանքից՝ տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում և դրան հաջորդող մեկ տարում: Այս դեպքում ընթացիկ տարում շրջանառության հարկ վճարող համարվելու օրվանից մինչև ԱԱՀ վճարող համարվելու օրն ընկած ժամանակահատվածի համար գործունեության այդ մասով իրացման շրջանառության (իրացումից հասույթի) նկատմամբ հաշվարկվում և գանձման է առաջադրվում շրջանառության հարկի գումարը՝ 5 տոկոս դրույքաչափով (նվազեցնելով այդ ժամանակահատվածի համար գործունեության այդ մասով իրացման շրջանառության (իրացումից հասույթի) նկատմամբ շրջանառության հարկ վճարողի կողմից հաշվարկված շրջանառության հարկի գումարները), ինչպես նաև հարկի գումարները սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված տույժերի գումարը:

Ստուգման ակտը կամ ստուգում իրականացնող անձանց գործողությունները սահմանված կարգով բողոքարկվելու դեպքում հարկ վճարողը դադարում է հանդիսանալ շրջանառության հարկ վճարող և համարվում է ԱԱՀ վճարող դիմում-գանգատը մերժվելու մասին որոշումը պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) հանձնելու օրվան հաջորդող օրվանից: Դիմում-գանգատը բավարարվելու կամ դիմում-գանգատը մերժելու վերաբերյալ որոշումը դատական կարգով չեղյալ ճանաչվելու դեպքերում շրջանառության հարկ վճարողը շարունակում է համարվել շրջանառության հարկ վճարող այն պահից, որ պահից, ստուգման ակտի համաձայն, դադարել էր համարվել շրջանառության հարկ վճարող:

«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում հարկային մարմնի կողմից նախագգուշացումը կիրառվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան հարուցված վարչական վարույթի շրջանակներում և նույն օրենքով սահմանված կարգով՝ վերադաս հարկային մարմնի ղեկավարի կամ նրա լիազորած պաշտոնատար անձի ընդունած վարչական ակտով:

3. «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանվել, որ բացի ձեռքբերումներն օրենքով սահմանված կարգով փաստաթղթավորված լինելուց առևտրական (առք ու վաճառքի)

գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների համար ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջները համարվելու են բավարարված նաև այն դեպքում, երբ մինչև ստուգումը շրջանառության հարկ վճարողը (էլեկտրոնային կամ թղթային եղանակով) հարկային մարմին հայտարարագիր ներկայացնի կամ հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ տվյալներ մուտքագրի իրեն ապրանքներ մատակարարած ու օրենքով սահմանված համապատասխան փաստաթուղթ չտրամադրած հարկ վճարողների ու ձեռք բերված ապրանքների վերաբերյալ, և այդ հայտարարագրի կամ տվյալների հիման վրա հարկային մարմինը օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգմամբ արձանագրի ձեռք բերված համապատասխան ապրանքների առկայությունը, կամ նույն օրենքով սահմանված ժամկետում շրջանառության հարկ վճարողի մուտք ստուգում չիրականացնի:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հավելվածով սահմանվել է շրջանառության հարկ վճարողներին ապրանքներ մատակարարած ու օրենքով սահմանված համապատասխան փաստաթուղթ չտրամադրած հարկ վճարողների ու ձեռք բերված ապրանքների վերաբերյալ հայտարարագրի կամ հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ մուտքագրված տվյալների ճշտման ստուգման կարգը:

4. Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-128-Ն օրենքի անցումային դրույթների համաձայն՝ ապրանքներ ձեռք բերելու պարտադիր փաստաթղթավորման պահանջը չի տարածվում մինչև 2014 թվականի հոկտեմբերի 1-ը ձեռք բերված և 2014 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ առկա ապրանքային մնացորդի վրա, որի մասին հարկ վճարողները օրենքն ուժի մեջ մտնելուց (01.10.2014թ.) հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևի տեղեկանք:

Խստացվել են անփաստաթուղթ արտադրանքի, ապրանքների տեղափոխման կամ առաքման կամ ուղեկցող փաստաթուղթը սահմանված կարգով չգրանցելու համար պատասխանատվության միջոցները.

1. 2014 թվականի հոկտեմբերի 1-ից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված տուգանքների կիրառման համար սահմանվել են նվազագույն չափեր: Խախտման հիմք հանդիսացող գործարքի կամ գործողության մասով գանձվելու է տուգանք անփաստաթուղթ ապրանքների կամ չգրանցված ուղեկցող փաստաթղթով ապրանքների գնի (արժեքի) 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս երկու հարյուր հազար դրամից: Խախտումն արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում խախտման երկրորդ փաստ արձանագրվելու դեպքում գանձվելու է տուգանք՝ անփաստաթուղթ ապրանքների կամ չգրանցված ուղեկցող փաստաթղթով ապրանքների գնի (արժեքի) 100 տոկոսի չափով, բայց ոչ պակաս հինգ հարյուր հազար դրամից, իսկ երրորդ և ավելի փաստ արձանագրվելու դեպքում՝ անփաստաթուղթ ապրանքների կամ չգրանցված ուղեկցող փաստաթղթով ապրանքների գնի (արժեքի) 200 տոկոսի չափով, բայց ոչ պակաս մեկ միլիոն դրամից:

2. 2014 թվականի հոկտեմբերի 1-ից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի կիրառման իմաստով՝

- շրջանառության հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված հայտարարագրում ներառված կամ հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ մուտքագրված տվյալները դիտարկվելու են ապրանք առաքող կամ տեղափոխող հարկ վճարողի կողմից անփաստաթուղթ ապրանքի առաքման կամ տեղափոխման դեպքեր, եթե նույն հարկ վճարողի մոտ հետագայում ՕՀՄ շրջանակներում արձանագրվեն օրենքի 4-րդ հավելվածով սահմանված կարգի խախտումներ.

- ապրանք առաքող կամ տեղափոխող հարկ վճարողի համար անփաստաթուղթ ապրանքի առաքման կամ տեղափոխման դեպք է համարվելու նաև այն դեպքը, երբ երեք տարբեր շրջանառության հարկ վճարողների կողմից հարկային մարմին ներկայացված հայտարարագրերի կամ

հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ մուտքագրված տվյալների համաձայն, նույն հարկ վճարողը գործարքը կամ գործողությունն իրականացնում է առանց օրենքի 4-րդ հավելվածով սահմանված վավերապայմանները բավարարող ուղեկցող փաստաթղթերի:

- ապրանք առաքող կամ տեղափոխող հարկ վճարողի համար անփաստաթուղթ ապրանքի առաքման կամ տեղափոխման դեպք է համարվելու նաև այն դեպքը, երբ շրջանառության հարկ վճարողների կողմից հարկային մարմին ներկայացված հայտարարագրում ներառված կամ հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ մուտքագրված տվյալները մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաստատվում և արձանագրվում են հարկային մարմնի կողմից:

Ներդրվել են առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների մոտ փաստաթղթավորման պահանջի կատարման առումով հարկային մարմնի կողմից ստուգումների իրականացման և ստուգումների արդյունքների բողոքարկման պարզեցված ընթացակարգեր:

1. 2014 թվականի հոկտեմբերի 1-ից «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանվել են ստուգման երկու նոր տեսակներ:

- առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների մոտ ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման ստուգումներ,

- առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողներին ապրանքներ մատակարարած ու օրենքով սահմանված համապատասխան փաստաթուղթ չտրամադրած հարկ վճարողների ու ձեռք բերված ապրանքների վերաբերյալ հայտարարագրի կամ հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ մուտքագրված տվյալների ճշտման ստուգումներ:

2. Օրենքով սահմանվել են ստուգումների այս տեսակների առանձնահատկություններ:

- այս ստուգումների դեպքում չի գործում հանձնարարագրի երկու օրինակը ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին ներկայացնելու պահանջը,

- այս ստուգումների տեսակների վրա չեն տարածվում ստուգումների հաճախականության սահմանափակումները,

- այս ստուգումների անցկացման ժամկետը չի կարող գերազանցել մեկ աշխատանքային օրը,

- այս ստուգումների արդյունքների ամփոփման առանձնահատկությունները սահմանած են օրենքի N5 հավելվածով,

- բողոքները վերադասության կարգով քննության առնելու ժամկետի առումով սահմանվել է բացառություն այս ստուգումների դեպքում կազմված ակտերը, արձանագրությունները, ստուգում իրականացնող անձանց գործողությունները բողոքարկվելու համար, երբ բողոքը քննության է առնվում և դրանց վերաբերյալ որոշումներ է ընդունվում 10 աշխատանքային օրվա ընթացքում:

3. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի N5 հավելվածի համաձայն:

- ստուգումներն իրականացվում են օրենքին համապատասխան հրապարակված հանձնարարագրի հիման վրա, որի երկու օրինակը ստուգումը փաստացի սկսվելու օրը տրվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին (կամ ի պաշտոնե նրան փոխարինելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին):

- հարկային մարմնի պաշտոնատար անձինք ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման ստուգումը սկսելու օրը տնտեսավարող սուբյեկտի մոտ ընտրում են վաճառքի վայրում առկա մինչև 30 անուն ապրանքատեսակ, որոնց մասով պետք է իրականացվի ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման ստուգում: Ստուգման ընթացքում հարկային մարմնի

պաշտոնատար անձինք իրավունք չունեն իրականացնելու արձանագրությունում չնշված ապրանքատեսակների մասով ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման ստուգում:

- ստուգման ընթացքում հարկային մարմնի պաշտոնատար անձինք պահանջում են ընտրված ապրանքատեսակների համար ներկայացնել դրանց ձեռք բերելը հիմնավորող փաստաթղթերը և տեղեկություններ վաճառքի վայրում առկա՝ դրանց մնացորդների վերաբերյալ:

- N5 հավելվածով սահմանվել են այն դեպքերը, երբ տնտեսավարող սուբյեկտի մոտ ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման՝ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները համարվում են խախտված:

- ստուգման արդյունքներն արտացոլվում են երկու օրինակից կազմվող ակտում (ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում հայտնաբերվելու դեպքում) կամ արձանագրությունում (ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում չհայտնաբերվելու դեպքում):

- Շրջանառության հարկ վճարողներին ապրանքներ մատակարարած ու օրենքով սահմանված համապատասխան փաստաթուղթ չտրամադրած հարկ վճարողների ու ձեռք բերված ապրանքների վերաբերյալ հայտարարագրի կամ հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ մուտքագրված տվյալների ճշտման ստուգումն իրականացվում է հայտարարագիրը ստանալու կամ տվյալները մուտքագրվելու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում, որի ժամանակ ստուգվում են ներկայացված հայտարարագրի կամ հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ մուտքագրված տվյալների հիման վրա ձեռք բերված համապատասխան ապրանքատեսակների առկայությունը վաճառքի վայրում, որի արդյունքներն արտացոլվում են երկու օրինակից կազմվող արձանագրությունում: Այս ստուգման ընթացքում կարող է ստուգվել քացառապես ներկայացված հայտարարագրի կամ հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ մուտքագրված տվյալների հիման վրա ձեռք բերված համապատասխան ապրանքատեսակների առկայությունը:

- ստուգումն իրականացնող անձանց գործողությունները, ինչպես նաև ստուգման արդյունքում կազմված ակտը կամ արձանագրությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում կարող են սահմանված կարգով բողոքարկվել:

Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառում

Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-131-Ն օրենքով սահմանվել է տրանսպորտային միջոցների մեջ (վրա) հսկիչ-դրամարկղային մեքենաներ տեղադրելու հնարավորություն: Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ տարածքում անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից տրանսպորտային միջոցներով վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս տրանսպորտային միջոցների մեջ (վրա) տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենաները կարող են կիրառվել միայն հարկային հաշիվներ և (կամ) այլ հաշվարկային փաստաթղթեր (բայց ոչ ՀԴՄ կտրոններ) էլեկտրոնային եղանակով դուրս գրելու համար:

Անշարժ գույքի վարձակալություն

2015 թվականի հունվարի 1-ից անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք ԱԱՀ-ի վճարման պարտավորություն չեն կրում անշարժ գույքի վարձակալության գործարքների մասով: Փոխարենը անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք անշարժ գույքի վարձակալությունից ստացված եկամուտների հանրագումարն ընթացիկ տարում 58.35 մլն դրամը գերազանցելու դեպքում գերազանցող մասից տարեկան հաշվարկելու են լրացուցիչ եկամտային հարկ 10% դրույքաչափով՝ հաշվի չառնելով օրենքով սահմանված նվազեցումները, ինչպես նաև այդ եկամուտներից հաշվարկված և պահված եկամտային հարկը: